




“ԹՈՂ ՏՈՒՒՔ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ”. ԴՈՒԿ • ԺԸ • 16 •

ՀԱՏՈՐ ԺԵ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ • ԱՊՐԻԼ 1, 1886

ԹԻՒ 4



ԳԵԹՍԵՄԱՆԻ ՊԱՐՏԵՉԸ

ԳԵԹՍԵՄԱՆԻ ՊԱՐՏԵՉԸ

Գեթսեմանի: Ի՞նչպէս որբացած է այն տեղը Փրկչին մերոյ կենաց այն դէպքէն որ պատահեցաւ հոն, և որ պիտի խառն զգացումներով կը լսենք այդ բառը: Գեթսեմանի կը պատմէ մարդկային ատերութիւնն ընդդէմ բարոյն: Բազմութիւնն եկաւ հոն բռնել զՅիսուս որ պարտած էր բաւրք ընելով, որպէս զի քաջէին զնա գատաստանի և մահաւան: Կը պատմէ

մարդկային երկչտութիւն: Ընտրեալ ընկերներն այն Մարգուն որ էր վշտաց տէր, երբ վտանգ հասաւ անոր, և մէնքը թողոյցին զնա և փախան: Կը պատմէ մարդկային արծաթսիրութիւն: Ո՞նք որ մասնակից էր Փրկչին սիրոյն և բարեկամութեան, կը մատնէ զնա թշնամեացը՝ դոյզն դուսմար մը ստակի համար:

Բայց կը պատմէ նաև Աստուածային տէր և զոհ: Տէրն մեր ընդունեց բա-

ժակը որոյ դառնութիւնը ոչ ոք մահկանացու կարող է երբէք զխանալ: Հակառակորդին փորձութիւնը, եւ դարձունելու համար ահաւոր չարաբանքէն որով Փրկչին մեր պիտի ըլլար կատարեալ իբրև Առաջնորդ մեր վըրկութեան, Նա յաղթեց: Մինչև իսկ տագնապը չտուին Անոր անհող ըլլալ իրեններուն վրայ: “Թող տուէք ատոնք որ երթան,” ըսաւ իւր աշակերտաց համար, և անոր դուրսն հասաւ

մինչև անգամ իւր թշնամեաց, և անոր վերջին հրաշքն եղաւ բժշկել քահանայապետի ծառային ականջը:

Նախորդ երեսի պատկերը կը ցուցնէ պարտէզը որ հիմա կը ցուցուի իբրև Գեթսեմանի պարտէզը, և հաւանակահասակս բուն Գեթսեմանին հետի չէր այդ տեղէն: Պարտէզը կը բովանդակէ աղէկ մշակուած ծաղկոցներ և քանի մը ձիթենիներ որ կը թուին թէ շատ հին են: Չեն կրնար անոնք մնացած ըլլալ սակայն 18 դարէ հետէ, բայց կարելի է թէ եղած են հին ծառերուն արմատներէն: Պարտէզն երթալու համար քաղաքէն, կ'ելլեն մարդիկ Սբ. Ստեփանոսի դռնէն որ է քաղաքին արևելեան կողմը, կ'իջնեն կեդրոն հեղեղատը և անցնելով ձորէն այն ինչ կը սկսին ելլել Ձիթենեաց լեռը, կը հասնին հոն: Քաղաքէն հեռաւորութիւնը, ուրով 10 է մինչև 15 վայրկեան կը տևէ:

Մինչ կը նայինք պատկերին վրայ և կը յիշենք թէ այսպիսի պարտիզի մէջ և թերևս նոյն իսկ այս պարտիզին մէջ փրկիչն մեր թափեց մեզի համար արեան կաթիլներ, հարցուններ մեր անձերուն, ի՞նչ կ'ընենք ցուցնելու համար մեր երախտագիտութիւնն առ Նա:

ԿՐԷՅՅԱՐԱՅԸՐԻ ՊՈՊԻՆ

Էտիպորոյի հրապարակային փողոցներէ միոյն մէջ կայ պատուանդան մը որուն վրայ կը կենայ պղնձի թաւամազ փոքրիկ շան մը արձանը, և անոր ներքև կայ արձանագրութիւն թէ կառուցուած է այն՝ Անգղիացի հարուստ և բարեսէր աիկնոջէն, Պարոնուհի Պըրտէթ Բուլտէ, ի յիշատակ հաւատարիմ փոքրիկ շան որ կը կոչուէր Կրէյֆրայըրի Պոպի: Հոն կը կարգացուի այն փոքրիկ շան պատմութիւնը, և կը թուի թէ պատիւ ընդունած է չնիկը այս կերպով իւր առ տէրն նշանաւոր հաւատարմութեան համար:

Անոր տէրը մեռաւ 1838ին, և չնիկը, յայտնապէս երևնալով անմխիթար վշտի մէջ, գնաց անոր յուղարկարաց հետ գերեզման մերձակայ կրէյֆրայըրի գերեզմանատունը: Եւ ոչ իւրիք հնար եղաւ հրապարակ չնիկը որ հեռանար գերեզմանատան մերձականերէն: Կը թուէր որ կը զգար թէ իւր տէրը հոն էր, և թէ բնաւ բաժնուելու չէր անոր քովէն: Այսպէս կ'անց-

նէին օրերն իրարու ետէ, և տակաւին Պոպի կ'երթար ետ գերեզման ուր տեսած էր թէ յուղարկաւորք դրին իւր տէրը: Ամիսներ անցան և տարիներ ևս, և տակաւին Պոպի կը յիշէր իւր տիրոջ գերեզմանը: Եղաւ ընտանի և սիրելի քաղաքին այն կողմը: Հուսկ յետոյ 1872ին, անոր տիրոջ մահուանէն տասնևչորս տարի ետքը, մեռաւ և Պոպի, մինչև ի վախճան հաւատարիմ ըլլալով յիշատակին և սիրոյն որ սպաւորուած էր անոր փոքրիկ թաւամազ գլխոյն մէջ: Օր մը Պոպի գրտնուեցաւ մեռած իւր տիրոջ գերեզմանին վրայ զոր հսկած էր հաւատարմութեամբ տասնևչորս տարի:



ԱՐՔՈՒՆԻ ՔՈՒԷՃ Ի ՔԷՅՄՊՐԻՃ

նոյն էտիպորոյ քաղաքը հին գերեզմանատան մը մէջ թաղուած են շատ մարտիրոսացեալ «Ռիտտոցներ»: Անոնք կը կոչուին այս անուամբ՝ գրաւոր ուխտին համար զոր իւրաքանչիւրը ստորագրեց խոստանալով հաւատարիմ ըլլալ երեսն և սկզբանց և Տէրոջ:

Անոնք գիտէին թէ եթէ ստորագրէին զայն և ապրէին անոր համեմատ՝ պիտի դրուէին բանտ և մինչև անգամ պիտի սպանուէին, բայց չվարանեցան ստորագրել: Անոնցմէ շատեր վերաւորեցին իրենց բազուկները և ստորագրեցին ուխտը բուն իրենց արեամբ, և բազումք յաւելցուցին իրենց անունէն ետքը, «Միշտ է՞մա՞ն»: Իւ եղան իսկ հաւատարիմ մինչև ի մահ:

Յիշենք զնա որ բաւ. «Մինչև ի մահ հաւատարիմ եղիր, ու քեզի կենաց պսակը պիտի տամ:»

ԱՐՔՈՒՆԻ ՔՈՒԷՃ Ի ՔԷՅՄՊՐԻՃ
Անցեալ ամիս դրինք Տուոյ Աւստրիոյ մէջ իթըն Գոլէճի պատկերը, և ըսինք մեր ընթերցողաց թէ պատանիք բազմութեամբ կը դիմեն հոն պատրաստուել մտնել Անգղիական մեծ համալսարանները: Այս ամիս կը դնենք պատկերն միոյն այն քովէնէրէն որ կը վերաբերին Գէյնսպրիճ համալսարանին: Կան ի Գէյնսպրիճ 17 այսպիսի քովէնէր որ ի միասին կը կազմեն համալսարանը, որուն 1885ի արձանագրութեան ստմարին մէջ գտնուած բոլոր անուանց թիւն էր 12,290: Օքսֆորտ համալսարանն ունի 21 քովէն և 11,050 անուն արձանագրութեան տու-

մարին մէջ: Բայց ասոնց միայն մէկ չորրորդը այժմ են ուսանող, այնպէս որ ասոնց իւրաքանչիւրն ստուգիւ փոքր են քան Պէրլինի և Լայփճիլի համալսարանները որք են երկու մեծագոյն համալսարանք ի Գերմանիա, որոց առաջինն ունէր 1882ին իւր 4,000, և երկրորդը՝ 3,500 ուսանող: Ի Սկովտիա Էտիպորոյի համալսարանն ևս ունեցած է երբեմն երբեմն իւր 4,000 ուսանող: Քէյնսպրիճ քաղաքն է քէմբրիջի վրայ, որմէ կամ մանաւանդ անոր վրայ ձգուած հին Հռոմէական կամուրջէ մը կ'առնու իւր անունը, վասն զի «պրիճ» Անգղիերէն կը նշանակէ կամուրջ: Քէյնսպրիճի համալսարանին օրինաւոր հիմնադրութիւնն եղաւ յամին 1231, բայց կը կարծուի թէ հոն սկսան դիմել ուսանողք կանուխ, եթէ

ներորդ դարուն : Ի՞նչպէս զարմանալի պիտի թուէր ուսանողի մը որ ասկէ 1000 տարի առաջ մտած էր համալսարանը եթէ հնար ըլլար անոր մտնել այս օրուան համալսարանը : Այն ժամանակ ո՞րչափ քիչ ծանօթութիւն կար գիտութեանց , և այն դարու իմաստուն բրտֆէտրներու սորվեցուցած ո՞րչափ ուսմունք հերքուած են այժմ իբրև յիմարութիւն : Ասկէ հազար տարի ետքը անոր մէջ ուսանողք պիտի նային մեր տըղիտութեան վրայ նոյն գլխով : Չիարդ և իցէ աղէկ է որ աշխարհ երթայ յառաջ և ոչ ետ :

ԱՌԿԱՍԵԱՆ ԲՈՅՆ ՇԻՆՈՂ ԹՈՉՈՒՆՔ

Աշխարհիս այլ և այլ կողմերը կան շատ թռչուններ որ մեծ հանճար կը ցուցնեն առկախեալ բոյներ շինելու մէջ : Անոնց մէկ տեսակը որ կը գտնուի Ափրիկէ , կը կոչուի ոստայնանկ թռչուն , և ուրիշ մը որ կը գտնուի այլ և այլ երկիրներու մէջ , կը կոչուի դերձակ թռչուն : Անոնց մէկ տեսակը իրօք կը կարէ ծառոց տերևներն իրարու հետ սարդի ոստայնի թերով զոր կ'առնու առանց արտօնութիւն խնդրելու սարդէն : Պատկերին մէջ երկու օրինակ կայ այս տեսակ բոյնի : Անոնց մեծագոյնն է Օւել կոչուածինը , որ է գեղեցիկ , սև և սակեփայլ թռչուն Ամերիկայի : Այս թռչունը կ'ընտրէ ծառի ոտի մը երկնդի ծայրը , և այն ճիւղերուն կը կցէ զօրաւոր լար կանեփի կամ վշոյ : Ասկէ կը կախէ 6 կամ 8 մասնաչափ երկայնութեամբ սուրբակ մը զոր կը հիւսէ ինք , և կը պատէ զայն կակուղ նիւթերով : Բոյնը սովորաբար կը շինէ տերևոց հովանոցն ներքև : Եւ արդեօք փոքրիկ մանուկ մը պիտի կրնար ուղել աւելի հանդիստ օրօրոց քան օրիցի ձագերունը :

Փոքրագոյն բոյնը որ կը տեսնուի պատկերին մէջ , է թիլ կոչուած թռչունոյնը , որ է փոքրիկ , և ազին այնչափ երկայն է որչափ մարմինը : Այս թռչունը ևս շատ հանճարով կը շինէ իւր բոյնը : Սովորաբար կը ծածկէ անոր արտաքին երեսը մամուռով որ կը փակչի բուրդին որով շինուած է բոյնը , իսկ ներսի կողմը կը պատէ փետրով , կակուղ անկողին շինելու համար : Բնախօս մը կ'ըսէ թէ գտած էր այս թռչունոյն մէկ բոյնը որուն մէջ կար 14 ձու : Որպիտի մեծ ընտանիք մը , սնուցանելու : Չագերը կը սնանին ըստ մեծի մասին թրթուրներով , և անձ մը որ դիտած է թրթուրու զոյգ մը , կ'ըսէ թէ կը տանէին ի միասին ճճի մը

դէպի բոյնը օրն ողջոյն իւրաքանչիւր երկու վայրկեանը միանգամ : Մեր փոքրիկ ընթերցողներէն անոնք որ սկսած են սորվիլ թուաբանութիւն , կրնան հաշուել և ցուցնել թուանշանօք թէ օրուան 12 ժամոց մէջ քանիկան ճճի կ'իյնայ թրթի 14 ձագերուն իւրաքանչիւրին :

“ԳԻՏԵՄ ԹԷ ՆԵՐԵՑ ԻՆՁ”

Երիցական եկեղեցւոյ մը հոգարար ձուաց ժողովը գումարեցաւ քննել

հոն , եկեղեցւոյն հովիւր մօտեցաւ անոր , և հարցունելով անոր հասկցաւ թէ տղան ևս կ'ուզէր ընդունուիլ եկեղեցւոյ հաղորդութեանը : Վասն որոյ ըսուեցաւ անոր նստել , և սկսաւ քնննութիւնը : Քննութիւնն յառաջ գնաց գոհացուցիչ կերպով մինչև սոփրական հարցմանց մեծագոյն մասն հարցուեցաւ , տղան պարզ կերպով և հեշտութեամբ պատմեց պարագաները որոց միջոցաւ արթնցած էր զգալ իւր



ԱՌԿԱՍԵԱՆ ԲՈՅՆ ՇԻՆՈՂ ԹՈՉՈՒՆՔ

մի քանի անձինք որ կ'ուզէին ըլլալ եկեղեցւոյ անդամ : Մեծարոյ սարկաւազք նստան շրջանակի ձևով և անոնց մէջ տեղ նորահասակ հովիւր : Եկեղեցւոյ անդամ լինելու առաջարկողք իրարու ետևէ հետգհետէ քննուելէ ետքը ըստ սովորականին , ամենեքին ընդունուեցան եկեղեցին և արձակուեցան : Տասն տարեկան տղայ մը նստած էր դրան մօտ ընկղմած խորհրդոց մէջ : Կը կարծուէր թէ կը սպասէր անձի մը որ կը գտնուէր ժողովոյն մէջ , բայց երբ գացին ամէնքը և նա տակաւին կը մնար

մեղաւոր ըլլալն և իւր պէտքը Գրիստոսի իբրև ֆրկչի :

Այնուհետև հարցուեցաւ անոր , “Ի՞նչ ըրիր երբ զգացիր թէ մեծ մեղաւոր ես :”

Քննչաց այուրները բողբոջեցան երբ պատասխանեց տղան այսպէս , “Ես իսկ և իսկ գացի առ Յիսուս և ըսի անոր թէ մեղաւոր եմ , և կը ցաւիմ անոր համար , և խնդրեցի անկէ ներել ինձ :”

Բայց յաջորդ պատասխանը դարձեալ մթաղնեց անոնց երեսները ,

վասն զի երբ հովին հարցուց տղին, «Եւ կը յուսամ թէ Յիսուս լսեց և ներեց քեզ քու մեղքերդ», նա պատասխանեց անմիջապէս, «Էս ոչ միայն կը յուսամ, տէր, այլ զէրեմիէ ներեց ինձ»:

Վստահութեան զգացում մը ակներև էր եղանակին մէջ որով արտասանեց տղան «Գիտեմ» բառը, այնպէս որ սարսեց լսողները: Մարկաւագաց երիցագոյնը վեր առաւ աշուրներէն իւր ակնոցը և նայեցաւ եկեղեցին մտնել առաջարկող այն փոքրիկ տղին վրայ և ըսաւ,

«Իրաւ զէրեմիէ Յիսուս ներեց մեղքերդ»:

«Ս,յ», տէր», պատասխանեց տղան անմիջապէս և առանց վարանելու:

Վսեմ լուծիւն պատեց առ վայր մի քննութեան մէջ, կը վախնային թէ այսպիսի դրական պատասխան յառաջ կրնար գալ միայն յանդիմութենէ: Եւ հետեցուցին թէ տղան սխալ հիման վրայ կը գտնուէր:

«Գու՛ն ըսել կ'ուզես, տղաս, թէ կը յուսաս որ Յիսուս ներած է մեղքերդ, այնպէս չէ», դարձեալ հարցուեցաւ անոր:

«Կը յուսամ թէ ներած է, նաև գիտեմ իսկ թէ ներած է», պատասխանեց տղան փայլուն ժպիտով իւր անվիհեր երեսին վրայ:

«Ի՛նչպէս գիտես զոչդ, տղաս», հարցուեցաւ անոր, և իւրաքանչիւր որ իւր ուշադրութիւնը տուած էր ըսել թէ ի՛նչ պատասխան պիտի տար տղան:

«Նա ինքն ըսած է թէ պիտի ներէ», ըսաւ տղան զարմացմամբ խորհելով թէ արդեօք կը տարակուսէի՞ն Յիսուսի խոստման վրայ:

«Նա ըսած է թէ ի՛նչ պիտի ընէ», հարցուցին:

«Նա ըսած է թէ», պատասխանեց տղան, «եթէ ես խոստովանիմ մեղքերս, հաւատարիմ և արդար է և պիտի ներէ ինձ զանոնք, և ես խոստովանեցայ զանոնք անոր, և գիտեմ թէ ներեց զանոնք. որովհետև Աստուած ըսած է այսպէս, անշուշտ պիտի կատարէր»:

Մարկաւագներէն մին հանեց իւր ակնոցը սրբել անոր ապակիները, վասն զի աշուրներէն հոսած արտասուքէն աղօտացած էին, և դարձաւ հովուին և ըսաւ,

«Տղան շատ ուղիղ ըմբռներ է, տէր: Մարմին և արին յայտնած չեն զայն անոր: Կ'առաջարկեմ աւարտել քրննութիւնը իբրև յոյժ գոհացուցիչ»:

Գոհութիւն Աստուծոյ փրկութեան և անոր գիտութեան համար:

ԹՈՒՍԵՆ ԼՈՒՎԷՐԹԻՒՐ

Արևմտեան Հնդկաստանի արևուտ երկրից ներքև յամին 1743, ծնաւ գերի մը Թուսէն Լուվերթիւր անուն: Միւրեքի էր նա և համբերող բնաւ լուծեամբ, հեղ էր և աղիւ բարուք,

և մաքուր՝ զնա շուրջ պատող անմաք լուծեանց մէջ, վասն որոյ հոն գաղթականութիւն հիմնող ընկերութեան գործակառարին ուշադրութիւնը գրաւեց, և սա սորվեցուց անոր կարգալ, գրել և թուարանութիւն. այնպիսի ուսմունք զօրս հազիւ կը սորվէր գերի մը:

Երբ 1791 ին ընդհանուր ապստամբութիւն ծագեցաւ դերեայ մէջ, մերժեց միաբանիլ անոնց հետ մինչև որ նախ չապահովեց իւր տիրոջ և անոր ընտանեաց վիճակը. այնուհետև մտաւ զօրաց մէջ իբրև յինանպետ և շուտով բարձրացաւ գլխաւոր հրամանատարի աստիճանին: Յետոյ Մնդղիսցոց հետ պատերազմներուն մէջ ընտրուեցաւ ընդհանուր հրամանատար Հայթի կըղզոյն զօրաց, և անոր մեղմ և բարեւէր կառավարութեան ներքև այն հովիտը դարձեալ ժպտեցան պտղաբերութեամբ և ամէն երկրի նաւեր կը շրջէին անոր շուրթերը:

«Տղայ մը կրնար երթալ ապահովապէս կըղզոյն մէկ ծայրէն միւսը ձեռքն ունենալով պարկ մը ոսկի»:

Սյն ատեն էր որ Նաբոլէոն զըրկեց իւր զօրաց ընտրելագոյններէն 30,000, որք եղած էին Եգիպտական բրդանց վրայ և ահ և սարսափ ազդած էին ողջոյն Երոսոպոյի սրտին մէջ. զրկեց զանոնք վաճառու նաւերով ընդհրամանատարութեամբ Լըքլէր զօրավարին, որպէս զի դարձեալ գերի ընեն զՀայթիցիս:

Թուսէնի յատուկ քարտուղարը կը գրէր առ Նաբոլէոն, «Հայր, թող զանոնք առանձին: Սյն է քու պետութեանդ իշխանկազոյն մասը, զոր կը կառավարէ այն մարդը զոր հանեց Աստուած փրկել այս կըղզին, որոյ առջև կը հալին ազգեր զօրս կը կառավարէ»:

Օրուս չըրաւ այս նամակը: Նաբոլէոնի մեծ նաւերը խարխիս նետեցին խաղաղ նաւահանգիստը: Զօրքերն ելան ցամաք, և ամէն տեղ դիմաւորուեցան կրակով և սրով: Լըքլէր այժմ հրատարակեց խաղաղութիւն: Սպայք և զինուորք վար դրին իրենց զէնքերը: Թուսէն որ գրեթէ միայակ մնացած էր, լուր զրկեց այսպէս.

«Կը հպատակիմ. կ'ատեմ արին. հեղութիւնը: Ես պատերազմեցայ մեր ցեղին ազատութեանը համար միայն: Երայխաւորէ ինձ զայս, և վար կը դնեմ զէնքերս»:

Վստահանալով թէ ընդունուած էր ինդիլը, հանդարտ գնաց տուն:

Բայց Թուսէն կը համարուէր շատ զօրաւոր թշնամի: Եւ ուստի կոչուելով ներկայ գտնուել ժողովոյ մը, ձերբակալուեցաւ և փութով գրուելով պատերազմական նաւ, զրկուեցաւ Գաղիս: Հոն նետեցին զնա ցուրտ և խաւար բանտ մը Սէնթ Ժուի դղեակին մէջ, որուն լայնութիւնն էր տասն երկու ոտք և երկայնութիւնը՝ քսան ոտք, և ունէր մի միայն պատուհան

որ կը նայէր Զուիցերիոյ ձեանց վրայ: Հոս արևուտ կըղզոյն զաւակը թարչամեցաւ ձմրան մէջ և մեռաւ:

Հայթի եղած է այժմ աղտու և Թուսէն ըրաւ զայն ինչ որ է հիմա: «Նա հիմնած է այնպիսի խոր տէրութիւն մը զոր բոլոր աշխարհ կարող եղած չէ արմատաքի խել»:

ՄՆԻԿ

Մնդղին ամենէն հետաքրքրական յատկութիւններէն մին է անոր լուծուելը կամ խառնուելն ուրիշ մետաղաց հետ: Եթէ ոսկի նուրբ թիթղան թերթ մը նետուի սնդիկի մէջ, կը հալի և անյայտ կ'ըլլայ գրեթէ այնչափ շուտ ինչպէս ձեան պատառ մը՝ երբ կ'իչնայ շուրք: Մնդղին ունի զօրութիւն բաժանելու կամ դիւրաւ լուծելու բեկանուտ մետաղները որոյ վրայ ներդրուածութիւն կարող չեն ընել մեր զօրաւորագոյն թիթուները: Ոսկուց և արծաթոյ հանքագործը կը ընուն անով իրենց մեքենաները որոց մէջ դրած են փխրեալ և կոչուած քարը ոսկեխառն, թէպէտ մարդ նայելով անոր վրայ կարող չէ տեսնել անոր մէջ ոսկուց նշոյն իսկ, զի անոր մասնիկները կարծի յոյժ նուրբ են, և սակայն սնդիկը կ'երթայ կը գտնէ զանոնք և կը խառնէ իւր զանգուածոյն մէջ: Յետոյ թորման գործողութեամբ հանքագործը կը հանեն զայն մաքրուած և զուտ վիճակի մէջ:

Քանի մը տարի առաջ երբ բրոֆէտոր մը բնալուծութեան վրայ կը դասախօսէր կիրոգ մը տիկնանց և օրիորդաց, առիթով ունեցաւ գտել քիչ մը սնդիկ՝ ճնշմամբ անցունելով այժեման մարթէ: Մնդիկը զտող մարթը մնաց սեղանին վրայ դասախօսութենէն ետքը, և ծերունի տիկին մը խորհելով թէ շատ հաճելի բան պիտի ըլլար անոր մէջ պահել իւր ոսկի ակնոցը, առաւ տարաւ զայն: Հետեւեալ առաւօտուն եկաւ բրոֆէտորին յոյժ խուլեալ, լսելով թէ ոսկին աներկայթ եղած էր անոր անձանօթ կերպով մը և թէ մարթոյն մէջ չէր մնացած ուրիշ բան բայց եթէ միայն ակնոցին ապակիները: Արդարև սնդիկը որ մնացած էր մարթոյն ծակտեաց մէջ, խառնուած էր ակնոցին ոսկոյն հետ և բոլորովին ջնջեր էր ակնոցին շրջանակները: Այն էր գաղտնիքը, զոր բրոֆէտորը բնաւ կարող չեղաւ բացատրել տիկնոջ այնպէս՝ որ գոհ ըլլար նա:

Ամերիկայի Մետիսարաց ընկերութեան կողմէն, Խմբագիրն է Գ. ԿԻՐՈՍ Գոխ-Խմբագիրն է Մ. ԱՐԱՆՅԱՆ Զինճանճուր կօզուշու

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԳՈՒԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱԿՈՒ ԳՈՏԱՅԵԱՆ